

ԼՈՌԻ ՄԱՐԶ

Կարգավիճակ	ՄԱՐԶ
Վարչական կենտրոն	ՎԱՆԱՁՈՐ
Մարզի խոշոր քաղաքները	Վանաձոր, Ալավերդի, Սպիտակ, Ստեփանավան, Տաշիր
Մարզպետ	ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Բնակչություն (2013թ.)	234700 մարդ
Բնակչության խտությունը	61.94 մարդ/կմ ²
Տարածք	3798 կմ ²
Պաշտոնական կայք	http://lori.gov.am
Հեռախոս	(+374 322) 4 61 92

1. Մարզի նկարագիրը

ՀՀ ԼՈՌԻ ՄԱՐԶԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ՀՀ Լոռու մարզի տարածքը	3798 կմ ²
Գյուղատնտեսական հողատարածքը	251154 հա
այդ թվում՝ վարելահողեր	42075 հա
Մարզկենտրոնը	Վանաձոր
Քաղաքային համայնքներ	8
Գյուղական համայնքներ	105
Գյուղական բնակավայրեր	122
Բնակչությունը	234.7 հազ. մարդ
	(մշտական, 2013թ. հուլիսի 1-ի դրությամբ)
այդ թվում՝	
քաղաքային	137.2 հազ. մարդ (58.46%)
գյուղական	97.5 հազ. մարդ (41.54%)



ՀՀ Լոռու մարզը տարածքի մեծությամբ և բնակչության թվաքանակով երրորդն է հանրապետությունում (գրադեցնում է ՀՀ տարածքի 12.7 %-ը): գտնվում է հանրապետության հյուսիսում, սահմանակից է Վրաստանի Հանրապետությանը (110կմ երկարությամբ), արևմուտքից Շիրակի, արևելքից Տավուշի, հարավից Կոտայքի և Արագածոտնի մարզերին: սահմանամերձ բնակավայրերն են Արծնի, Ապավեն, Ձորամուտ, Պաղաղբյուր և Զիլիգա:

Մարզի տարածքով է անցնում Թբիլիսի-Երևան երկաթուղու մի հատվածը:

ՀՀ Լոռու մարզն ընդգրկում է Սպիտակի, Ստեփանավանի, Տաշիրի, Թումանյանի, Գուգարքի տարածաշրջանները, Վանաձոր, Սպիտակ, Ստեփանավան, Ալավերդի, Տաշիր, Ախթալա, Թումանյան, Շամլուղ քաղաքները: Մարզի բնակչության թվաքանակը 2013թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակի 7.75 %-ը:

Պատմա-աշխարհագրական ակնարկ և կլիմա

Լոռու մարզն ընդգրկում է Դեբեդ գետի ավազանը ամբողջությամբ և ունի լեռնային ռելիեֆ: Նրա տարածքում են ձգվում Զավախքի, Բազումի, Փամբակի, Գուգարաց, Վիրահայոց, Հալաբի լեռնաշղթաները: Առանձնանում են Փամբակի, Լոռվա գոգավորությունները և Լոռվա ձորը: Լոռու մարզում ծովի մակերևույթից բարձրագույն կետերը Աջքասարի (3196մ) և Թեժ լեռան (3101մ) գագաթներն են, ամենացածրը՝ Դեբեդ գետի ստորին հոսանքի շրջանը՝ մոտ 380մ: Մարզն աչքի է ընկնում համեմատաբար խոնավ կլիմայով: Միջին և բարձրադիր գոտում կլիման բարեխառն լեռնային է, տևական, ցուրտ ձմեռներով: Ամեն տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ: Ամառները տաք են, համեմատաբար խոնավ: Տարեկան թափվում են 600-700մմ մթնոլորտային տեղումներ: Նախալեռնային գոտում կլիման մերձարևադարձային է, չափավոր շոգ և չորային ամառներով, մեղմ ձմեռներով: Ագրոկլիմայական տեսակետից ընկած է ինտենսիվ ոռոգման գոտում:

Մարզի տարածքով է հոսում Դեբեդ գետը՝ Ձորագետ, Մարցագետ և Փամբակ վտակներով: Հարուստ է նաև հանքային աղբյուրներով: Մարզի տարածքում տիրապետում են անտառային, լեռնատափաստանային, մերձալպյան մարգագետինները:

2. Մարզկենտրոնը և փարածաշրջանները

Վանաձոր

Լոռու մարզկենտրոն Վանաձոր քաղաքը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում և մեծությամբ հանրապետության երրորդ քաղաքն է: Մշտական բնակչության թիվը՝ 86.2 հազար մարդ (2013թ հունվարի 1-ի դրությամբ): Հեռավորությունը Երևանից ավտոմոբիլային ճանապարհով 120 կմ է, երկաթգծով՝ 224 կմ: Քաղաքը զբաղեցնում է 2638 հա մակերես, որի հիմնական մասը ծովի մակերևույթից բարձր է 1353 մ: Քաղաքի միջով անցնում են Փամբակ, Տանձուտ և Վանաձոր գետերը: Մարզի բնակչության 36.7 %-ը կենտրոնացած է Վանաձորում, իսկ քաղաքային բնակչության՝ 62%-ը: Քաղաքն ունի զարգացած ենթակառուցվածքներ, հանդիսանում է միջպետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների հանգույցային կետ: Մարզկենտրոնում է կենտրոնացված մեծածախ և մանրածախ առևտրի, ինչպես նաև այլ ծառայությունների գերակշիռ (մոտ 80%) մասը: Վանաձորում է կենտրոնացված նաև մարզի աշխատանքային ռեսուրսների, տնտեսապես ակտիվ բնակչության կեսից ավելին: Երբեմնի արդյունաբերական հզորություններով հարուստ, քիմիական արդյունաբերության ու միաժամանակ առողջարանային կենտրոն համարվող քաղաքն այսօր փորձում է վերագտնել իր նախկին տեսքը և վերականգնել իր նախկին համբավը:

Որոշակի ընդհատումներով գործում է քաղաքի քիմիական համալիրը: Քաղաքում գործում են բազմաթիվ մանր ու միջին արտադրական այլ ձեռնարկություններ, առավել քաղաքակիրթ ձև են ստանում առևտուրն ու ծառայությունների մատուցումը:

Թումանյանի տարածաշրջան

Տարածաշրջանի կենտրոն համարվող Ալավերդի քաղաքը (2013թ. հունվարի 1-ի դրությամբ 13 855 մշտական բնակիչ) գտնվում է Դեբեդ գետի ափին (Երևանից 167 կմ, Վանաձորից՝ 55 կմ հեռավորության վրա): Քաղաքը ձևավորվել է պղնձաձուլական գործարանի կառուցումից հետո: Վերագործարկված պղնձաձուլական արտադրությունը գործում է նաև այսօր, որի արտադրանքը կազմում է ՀՀ Լոռու մարզի տնտեսական ցուցանիշների ծանրակշիռ մասը:

Տարածաշրջանում վճռորոշ նշանակություն ունեն հանքաարդյունաբերության և մետալուրգիական ձեռնարկությունների աշխատանքը: Ի շնորհիվ «Էյ-Սի-Փի» և «Ախթալայի ԼՀԿ» ՓԲԸ-ների, ինչպես նաև կառուցվող Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրի ու հարստացուցիչ կոմբինատի տարածաշրջանում աղքատության մակարդակն ամենաքիչն է մարզի մնացած տարածաշրջանների հետ համեմատ: Տարածաշրջանի 4 քաղաքներն առավելապես ձևավորվել են արդյունաբերական խոշոր ձեռնարկությունների շուրջ և դրանց գոյատևումը հիմնականում կախված է այդ ձեռնարկությունների գործունեությունից:

Տարածաշրջանով է անցնում և հանրապետություն մտնող երկաթուղին և Հայաստանը արտաքին աշխարհին կապող հիմնական միջպետական նշանակության ավտոմայրուղին:

Տարածաշրջանի գյուղական համայնքների կեսից ավելին ունեն մինչև 500 բնակիչ և գտնվում են համեմատաբար հեռու տարածաշրջանի կենտրոն Ալավերդի քաղաքից ու մարզկենտրոն Վանաձորից: Ենթակառուցվածքների խիստ թերզարգացվածությունն ու քաղաքային համայնքներից ունեցած մեծ հեռավորությունն էականորեն դժվարացնում են գյուղատնտեսական մթերքների իրացումը, ինչպես նաև փոքրացնում են կրթական և առողջապահական հիմնական ծառայությունների հասանելիության մակարդակը:

Չնայած տարածաշրջանը համարվում է արդյունաբերական, այստեղ բավականին զարգացած է նաև գյուղատնտեսությունը: Ի շնորհիվ նրա, որ տարածաշրջանի գյուղերը սփռված են բարձր լեռնային գոտիներից (Աթան, Ահնիձոր, Շամուտ) մինչև մերձարևադարձային գոտի (Ալավերդի, Նեղոց, Շնող, Քարկոփ, Ճոճկան), գրեթե հավասարաչափորեն զարգացած են գյուղատնտեսության բոլոր ուղղությունները՝ անասնապահությունը, այգեգործությունը և բուսաբուծությունը: Տարածաշրջանում է մարզի անասնազվխաքանակի մոտ 24 և մշակվող գյուղատնտեսական հողերի մոտ 25 տոկոսը: Վերջին 3-4 տարիներին տարածաշրջանում թափ է առել զբոսաշրջության օբյեկտների ու ենթակառուցվածքների ստեղծումն ու կառուցումը, ընդ որում նաև գյուղական համայնքներում: Սակայն տնտեսության մակարդակի վրա այն դեռևս չունի էական ազդեցություն:

Թումանյանի տարածաշրջանի համար հիմնախնդիրներ են հանդիսանում.

1. քաղաքային համայնքների կենսագործունեության բարձր կախվածությունն արդյունաբերական խոշոր ընկերություններից (դրանց դադարեցման դեպքերում Ալավերդի, Ախթալա, Շամլուղ քաղաքների աշխատունակ գրեթե ամբողջ բնակչությունը կդառնա գործազուրկ),
2. բնապահպանական անբարենպաստ իրավիճակը,
3. մինչև 500 բնակիչ ունեցող և սահմանամերձ գյուղական համայնքներում ենթակառուցվածքների թերզարգացվածությունը:
4. տարածաշրջանի գյուղական համայնքներում գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունները.

5. գյուղական համայնքների բնակչության համար կրթական և առողջապահական հիմնական ծառայությունների հասանելիության դժվարությունները:

Ջարգացման հնարավորություններ

- Զբոսաշրջության զարգացման խթանման նպատակով ինֆրակառուցյունների ստեղծում:
- Թեթև արդյունաբերության ձեռնարկությունների ստեղծում և ընդլայնում (հատկապես Թումանյան քաղաքում, ինչը էական դեր կարող է ունենալ կանանց շրջանում գործազրկության նվազեցման համար):
- Անասնապահական միջին և խոշոր տնտեսությունների հիմնում (տարածաշրջանում հատկապես մեծ հեռանկարներ ունեն խոշոր ու մանր եղջերավոր անասունների մաստուցեղերի բուծումն ու խոզաբուծությունը):
- Զերմոցային տնտեսությունների հիմնում:
- Գյուղ մթերքների մթերման և վերամշակման ձեռնարկությունների ստեղծում, մասնավորապես՝
 - ✓ Պտղի և հատապտուղների վերամշակման, պահածոյացման, ինչպես նաև սառնարանային տնտեսություններ,
 - ✓ Ժամանակակից պահանջներին համապատասխանող սպանդանոցներ,
 - ✓ Կաթի վերամշակման արտադրամասեր:

Տաշիրի տարածաշրջան

Տարածաշրջանի կենտրոն համարվող **Տաշիր** քաղաքը (2013թ. հունվարի 1-ի դրությամբ 7773 մշտական բնակիչ) հիմնադրվել է 1834թ., որպես ռուսական աքսորավայր և կոչվել է Վորոնցովկա, հիմնականում ապրել են ռուսներ: 1991թ. վերանվանվել է Տաշիր: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ավտոճանապարհը: Տաշիր քաղաքը գտնվում է Երևանից 162, Վանաձոր քաղաքից՝ 53կմ հեռավորության վրա: Քաղաքում գործում են կաթի վերամշակմամբ զբաղվող մի քանի կազմակերպություններ, որոնց արտադրած կաթնամթերքը (պանիր, կարագ և այլն) լայն սպառում ունի ոչ միայն հանրապետությունում, այլև հանրապետությունից դուրս:

Տարածաշրջանը ընկած է մարզի հյուսիս-արևմտյան մասում, ամբողջությամբ գտնվում է բարձր լեռնային գոտում, բնակչության խտությամբ ամենանոսրն է մարզի տարածաշրջանում: Բնակչության գրեթե 65%-ը գյուղական բնակչություն է, իսկ տարածաշրջանի կենտրոն Տաշիր քաղաքի բնակչության մեծամասնությունը նույնպես հիմնականում զբաղված է գյուղատնտեսությամբ: Այսինքն տարածաշրջանը կարելի է համարել գյուղատնտեսական: Տարածաշրջանում է գտնվում մարզի գյուղատնտեսական հողերի մոտ 10%-ը և անասնազխաքանակի 20%-ը: Տարածաշրջանի համայնքների կեսից ավելին (12 համայնք) ունեն մինչև 500 բնակիչ, համայնքները գտնվում են իրարից համեմատաբար հեռու: Տարածաշրջանը սահմանակից է Վրաստանի հետ, ուստի կան նաև հեռավոր սահմանամերձ գյուղեր: Տարածաշրջանի գյուղատնտեսական հողերի մոտ 30%-ը, ինչպես նաև վարելահողերի 60%-ից ավելին չեն մշակվում: Ընդհանրապես տարածաշրջանում բնակչության ցածր խտության պատճառով միջին հաշվով մեկ բնակչին ընկնում է 0.61 հա վարելահող, սակայն հողերի ցածր բերքատվության պատճառով վարելահողերի մեծ մասը չի մշակվում և օգտագործվում է որպես խոտհարք:

Այսպիսով Տաշիրի տարածաշրջանի համար հիմնախնդիրներ են հանդիսանում.

1. Տաշիր քաղաքում գործազրկության բարձր ցուցանիշը:
2. Տարածաշրջանի մինչև 500 բնակիչ ունեցող ու սահմանամերձ գյուղական համայնքներում ենթակառուցվածքների թերզարգացվածությունը:
3. Անմշակ և չօգտագործվող գյուղատնտեսական հողերի բարձր ցուցանիշը:

Զարգացման հնարավորություններ

- Թեթև արդյունաբերության ձեռնարկությունների ստեղծում և ընդլայնում (հատկապես Տաշիր քաղաքում, ինչը էական դեր կարող է ունենալ կանանց շրջանում գործազրկության նվազեցման համար):
- Անասնապահական միջին և խոշոր տնտեսությունների հիմնում (տարածաշրջանում հատկապես մեծ հեռանկարներ ունեն խոշոր ու մանր եղջերավոր անասունների մասկաթնատու ցեղերի բուծումը):
- Գյուղ մթերքների մթերման և վերամշակման ձեռնարկությունների ստեղծում, մասնավորապես՝
 - ✓ Կաթի վերամշակման արտադրամասեր,
 - ✓ կարտոֆիլի մթերման և վերամշակման տնտեսություններ,
 - ✓ Ժամանակակից պահանջներին համապատասխանող սպանդանոցներ:

Սպիտակի տարածաշրջան

Տարածաշրջանի կենտրոն համարվող Սպիտակ քաղաքը (2013թ. հունվարի 1-ի դրությամբ 12881 մշտական բնակիչ) գտնվում է Փամբակ գետի ափին, Երևանից 100 կմ, իսկ մարզկենտրոնից 25 կմ հեռավորության վրա: Զբաղեցնում է 1400 հա տարածք: Քաղաքով է անցնում Երևան–Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհն ու երկաթուղին: Քաղաքը մինչև 1988թ. հանրապետության արդյունաբերական կենտրոններից էր:

Տարածաշրջանում հիմնականում գերակշռում են խոշոր (1000-ից ավելի բնակիչ ունեցող) գյուղական համայնքները՝ 20 գյուղական համայնքից 13-ը: Մինչև 500 բնակիչ ունեցող համայնքների թիվը 3-ն է: Տարածաշրջանը առավելապես գյուղատնտեսական է, խորհրդային տարիներին տարածաշրջանի կենտրոն Սպիտակ քաղաքում գործել են տասնյակից ավելի արտադրական ձեռնարկություններ, որոնցից 3-ը՝ խոշոր: Վերելակների գործարան, Շաքարի գործարան և կարի ֆաբրիկան): Խորհրդային Միության փլուզումից ու երկրաշարժից հետո վերելակների գործարանն ու շաքարի գործարանը դադարեցրեցին գործունեությունը, իսկ կարի ֆաբրիկան աշխատում է ընդհատումներով ու թերբեռնված:

Սպիտակ քաղաքում այսօր առաջնահերթ հիմնախնդիրը գործազրկություն է:

Տարածաշրջանը գյուղատնտեսական է՝ ունի մարզի տարածաշրջաններից ամենաշատ գյուղատնտեսական նշանակության հողերը (մոտ 38.3 հազար հա) և ամենաշատ վարելահողերը (մոտ 9.8 հազար հա): Ի շնորհիվ խոշոր համայնքների գերակշռությանը տարածաշրջանի գյուղական համայնքներում համեմատաբար զարգացած են ենթակառուցվածքները: Գյուղատնտեսական նշանակության հողերի օգտագործման տոկոսը հասնում է 83%-ի: Վերջին 3 տարիներին տարածաշրջանի ոռոգման ջրանցքների ու նեքին ցանցերի վերակառուցման նպատակով մոտ 1.2 միլիարդ դրամի ներդրում է կատարվել:

Տարածաշրջանի գյուղական համայնքներում հիմնական մասնագիտացումը հողագործությունն է, մասնավորապես բանջարաբուծությունը (կարտոֆիլ, կաղամբ): Հիմնական հիմնախնդիրը գյուղմթերքների իրացման խնդիրն է: Այսպիսով Սպիտակի տարածաշրջանի համար հիմնախնդիրներ են հանդիսանում.

1. Սպիտակ քաղաքում գործազրկության մակարդակի բարձր ցուցանիշը:
2. Տարածաշրջանի գյուղական համայնքներում գյուղատնտեսական մթերքների իրացման դժվարությունները:

Ձարգացման հնարավորություններ

- Թեթև արդյունաբերության ձեռնարկությունների ստեղծում և ընդլայնում (հատկապես Սպիտակ քաղաքում, ինչը էական դեր կարող է ունենալ կանանց շրջանում գործազրկության նվազեցման համար):
- Անասնապահական միջին և խոշոր տնտեսությունների հիմնում (տարածաշրջանում հատկապես մեծ հեռանկարներ ունի ոչխարաբուծությունը)
- Զերմոցային տնտեսությունների հիմնում
- Գյուղ մթերքների վերամշակման ձեռնարկությունների ստեղծում, մասնավորապես՝
 - ✓ Կարտոֆիլի և բանջարեղենի տեսակավորման, նախնական մշակման ու փաթեթավորման, ինչպես նաև սառնարանային տնտեսություններ,
 - ✓ Կաթի վերամշակման արտադրամասեր

Գուգարքի տարածաշրջան

Տարածաշրջանը, ինչպես և մարզի մյուս տարածաշրջանները, ունի իր առանձնահատկությունները և որպես հետևանք նաև առանձնահատուկ հիմնախնդիրներ: Տարածաշրջանով են անցնում միջպետական նշանակության ավտոճանապարհներն ու երկաթուղին: Տարածաշրջանը բացառապես գյուղական է՝ ըդգրկում է 21 գյուղական համայնք, որոնք կարելի է բաժանել երկու մասի՝ մի մասը դրանք այն համայնքներն են, որոնք գտնվում են մարզկենտրոն Վանաձոր քաղաքին շատ մոտ (Գուգարք, Շահումյան, Դարպաս, Բագում, Մարգահովիտ, Լերմոնտովո, Ֆիոլետովո) և մյուս մասը՝ մնացած համայնքները: Ընդ որում մարզի համայնքների 43%-ը, կամ 9 գյուղ ունեն 500-ից պակաս բնակիչ: Տարածաշրջանի գյուղական համայնքները, համեմատած մարզի այլ տարածաշրջանների հետ, ամենասակավահողն են՝ մեկ բնակչին ընկնող գյուղատնտեսական նշանակության հողերի մակերեսով՝ մոտ 2 անգամ պակաս մարզային միջին ցուցանիշից: Գյուղերի սակավահողությունը և 500-ից պակաս բնակչություն ունեցող համայնքների զգալի թիվը տարածաշրջանի հիմնական աղքատաժին գործոններն են: Մարզկենտրոնին մոտ գտնվող գյուղական համայնքների բնակիչների մի զգալի մասը զբաղված է Վանաձոր քաղաքում տնտեսության այլ ոլորտներում և գրեթե չի զբաղվում գյուղատնտեսությամբ: Այդ գյուղերը մեծամասամբ սակավահող են՝ հատկապես քիչ են գյուղատնտեսական նշանակության հողերը և բնակիչների մեծ մասը փորձում է աշխատանք փնտրել համեմատաբար մոտ գտնվող Վանաձոր քաղաքում: Չնայած տարածաշրջանի համայնքների գերակշռող մեծամասնությունը գտնվում է միջպետական նշանակության ավտոճանապարհի մոտ, սակայն մի շարք համայնքներ (գերազանցապես մինչև 500 բնակիչ ունեցող համայնքները), որոնք գտնվում են ավտոճանապարհներից հեռու բարձր լեռնային գոտում և որտեղ թերզարգացած են ենթակառուցվածքները:

Այսպիսով Գուգարքի տարածաշրջանի համար հիմնախնդիրներ են հանդիսանում.

1. սակավահողության պատճառով գյուղերում չգրադվածների ու գործազրկության բարձր ցուցանիշը,
2. տարածաշրջանում մինչև 500 բնակիչ ունեցող համայնքների մեծ թիվը, այդ համայնքներում ենթակառուցվածքների թերզարգացվածությունը

Զարգացման հնարավորություններ

- Թեթև արդյունաբերության ձեռնարկությունների ստեղծում և ընդլայնում, ինչը էական դեր կարող է ունենալ կանանց շրջանում գործազրկության նվազեցման համար)
- անասնապահական միջին և խոշոր տնտեսությունների հիմնում (տարածաշրջանում հեռանկարներ ունի և խոշոր, և մանր եղջերավոր անասնաբուծությունը)
- Այգեգործության ընդլայնում
- Զերմոցային տնտեսությունների հիմնում
- Գյուղ մթերքների վերամշակման ձեռնարկությունների ստեղծում, մասնավորապես՝
 - ✓ Կարտոֆիլի և բանջարեղենի տեսակավորման, նախնական մշակման ու փաթեթավորման,
 - ✓ Պտղի և հատապտուղների վերամշակման, պահածոյացման, ինչպես նաև սառնարանային տնտեսություններ,
 - ✓ Կաթի վերամշակման արտադրամասեր

Ստեփանավանի տարածաշրջան

Տարածաշրջանի կենտրոն համարվող Ստեփանավան քաղաքը (2013թ. հունվարի 1-ի դրությամբ 13086 մշտական բնակիչ), որը նախկինում հայտնի էր որպես առողջարանային քաղաք, զբաղեցնում է 1666 հա տարածք, գտնվում է ծովի մակերևույթից 1375 մ. բարձրության վրա: Քաղաքով է անցնում Երևան-Թբիլիսի միջպետական նշանակության ճանապարհը: Ստեփանավանը գտնվում է Երևանից 144 կմ, Վանաձորից՝ 35 կմ հեռավորության վրա: Քաղաքում գործել են արտադրական մանր ու միջին մի քանի ձեռնարկություններ, որոնք զբաղվել են սննդի, կահույքի և էլեկտրասարքերի արտադրությամբ:

Այս տարածաշրջանը նույնպես գյուղատնտեսական է՝ բնակչության մոտ 54%-ը գյուղաբնակ է, իսկ տարածաշրջանի կենտրոն Ստեփանավան քաղաքի բնակչության մի զգալի մասը նույնպես զբաղված է հիմնականում գյուղատնտեսությամբ:

Տարածաշրջանի գյուղական համայնքների մոտ 40%-ը կամ 7 համայնք ունեն մինչև 500 բնակիչ: Իր բնակլիմայական պայմաններով տարածաշրջանը բավականին նման է Տաշիրի տարածաշրջանին՝ բնակավայրերը գտնվում են ծովի մակարդակից 1250 մետր և ավելի բարձրության վրա: Տարածաշրջանի գյուղական բնակավայրերում, բնակլիմայական պայմանների շնորհիվ հավասարաչափ զարգացած են և հողագործությունը (գյուղատնտեսական նշանակության հողերի ավելի քան 80%-ը օգտագործվում է, որից ավելի քան 34%-ը՝ վարելահողեր են: Տարածաշրջանում վարելահողերի քանակը տոկոսային ցուցանիշով ամենաբարձրն է մարզի տարածաշրջանների մեջ): Տարածաշրջանի գյուղական

բնակչության շրջանում աղքատաձին հիմնական գործոններ են հանդիսանում գյուղմթերքների իրացման խնդիրը և հողագործության վարման ռիսկայնության բարձր աստիճանը (հաճախակի կարկուտ, սելավ և այլն):

Քաղաքում մեքենաշինության ու սարքաշինության, թեթև արդյունաբերական ճյուղի նախկինում գործող ձեռնարկություններից մնացել են միայն երկուսը, որոնք էլ աշխատում են ընդհատումներով ու թերբեռնված: 2011 թվականին գործարկվել է Արմանիսի ոսկի-բազմամետաղային հանքավայրը և կիս հարստացուցիչ ֆաբրիկան, տարածաշրջանում բացելով մոտ 400 նոր աշխատատեղ: Ստեփանավանում դեռևս խիստ զգալի է նոր աշխատատեղերի բացակայության խնդիրը՝ Արմանիսի հարստացուցիչ ֆաբրիկայում նոր աշխատատեղերի բացումը չի մեղմացրել խնդիրը, քանի որ տարածաշրջանում լեռնահանքային ոլորտի մասնագիտական կադրերի բացակայության պատճառով աշխատակիցներ են հրավիրվել մարզի կամ հանրապետության այլ քաղաքներից:

Չնայած նրա, որ տարածաշրջանում հավասարաչափ զարգացած են և հողագործությունը և անասնապահությունը, նպաստավոր բնակլիմայական պայմաններ կան զբոսաշրջության զարգացման համար, ըստ նպաստառու ընտանիքների թվի և բնակչության ընդհանուր թվի հարաբերակցության, տարածաշրջանն ամենաաղքատն է մարզում:

Այսպիսով Ստեփանավանի տարածաշրջանի համար հիմնախնդիրներ են հանդիսանում.

1. Ստեփանավան քաղաքում գործազրկության բարձր ցուցանիշը,
2. Գյուղական բնակավայրերում գյուղմթերքների իրացման դժվարությունները և հողագործություն վարելու մեծ ռիսկայնությունը
3. Մինչև 500 բնակիչ ունեցող գյուղական համայնքների զգալի թիվը
4. Երկրաշարժի հետևանքով անօթևան բնակչության առկայությունը:

Զարգացման հնարավորություններ

- Թեթև արդյունաբերության ձեռնարկությունների ստեղծում և ընդլայնում, ինչը էական դեր կարող է ունենալ կանանց շրջանում գործազրկության նվազեցման համար)
- անասնապահական միջին և խոշոր տնտեսությունների հիմնում (տարածաշրջանում հեռանկարներ ունի և խոշոր, և մանր եղջերավոր անասնաբուծությունը)
- Այգեգործության ընդլայնում
- Զերմոցային տնտեսությունների հիմնում
- Գյուղ մթերքների վերամշակման ձեռնարկությունների ստեղծում, մասնավորապես՝
 - ✓ Կարտոֆիլի և բանջարեղենի տեսակավորման, նախնական մշակման ու փաթեթավորման,
 - ✓ Պտղի և հատապտուղների վերամշակման, պահածոյացման, ինչպես նաև սառնարանային տնտեսություններ,
 - ✓ Կաթի վերամշակման արտադրամասեր

3. Տնտեսություն

Լոռու մարզի տնտեսությունն ըստ տնտեսության իրական հատվածի հիմնական ոլորտների համեմատաբար հավասարաչափ զարգացածներից է:

2013թ. 1-ին կիսամյակում, ըստ նախնական պաշտանական տվյալների հիման վրա կատարված հաշվարկի, Լոռու մարզի պայմանական ՀՆԱ-ն կազմել է 76.19 մլրդ դրամ՝ 266.9 մլն դրամով պակաս է քան նախորդ տարվա համապատասխան հաշվարկային ցուցանիշը, կամ կազմել է 2012թ. 1-ին կիսամյակի նկատմամբ 99.65%:

Ըստ մարզի տնտեսության իրական հատվածի հիմնական ոլորտների մարզի պայմանական ՀՆԱ-ի բաշխումը ունի հետևյալ պատկերը.

	2013թ. 1-ին կիս.	տեսակարար կշիռը %	2012թ. 1-ին կիս.	տեսակարար կշիռը %
Արդյունաբերություն	40.36	52.98	38.71	50.64
Գյուղատնտեսություն	14.21	18.66	15.00	19.62
Շինարարություն	4.49	5.90	4.54	5.94
Առևտուր	10.95	14.37	10.75	14.07
Ծառայություններ	6.17	8.09	7.44	9.73

Փաստորեն մարզի ՀՆԱ-ի աճ արձանագրվում է հիմնականում արդյունաբերության ոլորտում կամ ոլորտի հաշվին: Գյուղատնտեսության և շինարարության ոլորտների նման ցածր տեսակարար կշիռները պայմանավորված են սեզոնային առանձնահատկությամբ:

Լոռու մարզի տնտեսության իրական հատվածի գերակա, առաջնային ոլորտներն են **արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը և զբոսաշրջությունը:**

Արդյունաբերություն:

Մարզը հարուստ է արտադրական նշանակության օգտակար հանածոներով (պղինձ, կապար, ոսկի, արծաթ), շինարարական ու դեկորատիվ հանքերով (գրանիտ, բազալտ, ֆելզիտ, տուֆաավազաքարեր):

Մինչև 1988թ. դեկտեմբերյան երկրաշարժը մարզում հատկապես զարգացած և տեխնիկական բարձր մակարդակի վրա էր գտնվում արդյունաբերությունը, այդ թվում ինչպես վերամշակող, այնպես էլ հանքային: 1987թ. մարզի արդյունաբերության ոլորտում աշխատում էին ավելի քան 53 հազար մարդ, իսկ արդյունաբերական արտադրանքի ծավալը հասել էր 1.1 մլրդ ռուբլու: Արդյունաբերության զարգացած ճյուղերն էին՝

- ✓ լեռնամետալուրգիան (Ալավերդի, Ախթալա, Շամլուղ, Թումանյան քաղաքները),
- ✓ քիմիական (Վանաձոր, Ալավերդի),
- ✓ մեքենաշինությունն ու սարքաշինությունը (Վանաձոր, Ստեփանավան, Սպիտակ),
- ✓ թեթև (Վանաձոր, Սպիտակ, Ալավերդի)
- ✓ սննդի

- ✓ շինանյութերի
- ✓ փայտամշակման և այլն:

Մարզի և հանրապետության արդյունաբերության մեջ 80-ական թվականների վերջում իր ուրույն և գերակշիռ տեղն է ունեցել Վանաձոր (նախկին Կիրովական) քաղաքը, որն իր արտադրական պոտենցիալով երկրորդն է եղել հանրապետությունում՝ զիջելով միայն մայրաքաղաք Երևանին: 1987թ. քաղաքի արդյունաբերությունը թողարկել է 618.1 մլն ռուբլու համախառն արտադրանք (մարզի արտադրանքի 58.3%), արդյունաբերության ոլորտում աշխատողների թիվը կազմել է 30367 մարդ (մարզի արդյունաբերության ոլորտում աշխատողների թվի 56.2%-ը): Կիրովականի արտադրանքը առաքվում էր աշխարհի ավելի քան 40 երկրներ: Այդ տարիներին քաղաքում գործում էին 33 արդյունաբերական խոշոր ձեռնարկություններ և գիտաարտադրական միավորումներ:

Քիմիական արդյունաբերությունը ներկայացնում էին 3 ձեռնարկություններ՝ քիմիական կոմբինատը, քիմիական մանրաթելերի գործարանը և «Պոլիմերսուսինձ» ԳԱՄ-ը, որոնք միասին թողարկում էին քաղաքի արտադրանքի 18.7%-ը, այդ թվում՝

- ✓ Քիմիական կոմբինատը տարեկան արտադրում էր 180.6 հազար տոննա հանքային պարարտանյութ, 2254 տոննա ամյակ, 33666 տոննա կալցիումի կարբիդ, 13570 տոննա մելամին, 45.6 տոննա կորունդ (սուտակ),
- ✓ քիմիական մանրաթելերի գործարանը՝ 13556 տոննա քիմիական մանրաթել, 6556 տոննա տեքստիլ թել, 7000 տոննա ծխախոտի ֆիլտր,
- ✓ Պոլիմերսուսինձ» ԳԱՄ-ը՝ 1946 տոննա տարբեր տեսականու սուսինձներ:

Մեքենաշինական ու սարքաշինական 10 ձեռնարկությունները թողարկում էին քաղաքի արտադրանքի 29.5%-ը, այդ թվում աշխարհի շատ երկրներում հայտնի ճշգրիտ մետաղահատ (այդ թվում նաև ծրագրային) հաստոցներ, գազակտրիչ «Գուգարք» և «Օրբիտա» մեքենաներ, գազաաղեղնային կտրող և զոդող սարքեր տեխնոլոգիական հոսքագծերի տվիչների ազդանշանների չափող-հսկող երկրորդային սարքավորումներ, լուսատեխնիկական սարքավորումներ, ԽՍՀՄ-ի ռազմական արդյունաբերության մեջ մեծ կիրառում ունեցող «Էլեկտրոն» գործարանի թողարկած ռադիոտեխնիկական սարքավորումներ ու մեքենաներ:

Քաղաքի արտադրանքի ծավալում մեծ տեսակարար կշիռ ուներ (39.1%) **թեթև արդյունաբերությունը**՝ իր 241.9 մլն ռուբլու արտադրանքի ծավալով: Միայն կարի արտադրական «Բազում» միավորումը իր 5 ֆաբրիկաներով տարեկան թողարկում էր 5279 հազար հատ տարբեր տեսակի հագուստներ (կանացի, տղամարդու, մանկական): Քաղաքի այլ ձեռնարկություններում արտադրվում էր նաև տրիկոտաժեղեն մորթե մուշտակներ, կոշիկ, բամբակյա թել և այլն:

Կիրովականն ուներ **սննդի արդյունաբերության** 3 ձեռնարկություններ՝ մսի, կաթի կոմբինատներ, գարեջրի և ոչ ալկոհոլային խմիչքների գործարան, որոնք տարեկան շուրջ 26.2 մլն ռուբլու արտադրանքով հիմնականում բավարարում էին բնակչության պահանջարկը: Քաղաքում գործում էին նաև կահույքի, քարամշակման, գեղարվեստական իրերի և այլ

արտադրություններ, ինչպես նաև ջերմաէլեկտրակայանը, որը բացի էլեկտրաէներգիայի արտադրությունից, բնակչության մի զգալի հատվածին ապահովում էր նաև կենտրոնացված ջեռուցումով:

Պետք է նշել, որ ավերիչ երկրաշարժը ահռելի ազդեցություն ունեցավ նաև մարզի արտադրական պոտենցիալի վրա: Արդյունաբերության անկմանը նպաստեց նաև ԽՍՀՄ-ի փլուզումը՝ իր հսկայական սպառման շուկայի կորուստով և նյութերի ու սարքավորումների մատակարարման ծավալների նվազումով: Ներկայումս մարզում գործում են մոտ 180 արտադրական ձեռնարկություններ, այդ թվում նաև խորհրդային տարիներին ստեղծված ձեռնարկությունների մի մասը, որոնք հազիվ կարողանում են օգտագործել իրենց հզորությունների 10-15%-ը:

Արդյունաբերությունը ներկայումս նույնպես հանդիսանում է Լոռու մարզի տնտեսության կարևորագույն և հիմնական ոլորտը: Անկախության տարիներին մարզի արդյունաբերությունը ենթարկվել է կառուցվածքային փոփոխությունների: Քիմիական և մետալուրգիական ճյուղերը արտադրության ընդհանուր ծավալում պահպանել են իրենց առաջատար դիրքերը, զգալիորեն բարձրացել է սննդի արդյունաբերության տեսակարար կշիռը, սակայն մեքենաշինությունը, սարքաշինությունն ու թեթև արդյունաբերությունը զիջել են իրենց դիրքերը: Ի շնորհիվ փոքր հիդրոէներգետիկայի զարգացման մարզային ծրագրի իրականացման (ներկայումս մարզում գործում են 24 ՓՀԷԿ, որոնցից 14-ը շահագործման են հանձնվել 2008-ից 2012թվականների ընթացքում, 1-ը՝ 2013թ.), վերջին տարիներին դինամիկ աճ է ապահովում էլեկտրաէներգիայի արտադրությունը: Վերաբացվել ու բացվել են լեռնահանքային արտադրության նոր ձեռնարկություններ, ավելացել են նրանցարտադրության ծավալները: Մարզի արդյունաբերական համալիրում հիմնական արդյունաբերական ներուժը, ըստ արտադրության ծավալների, կենտրոնացված է Թումանյանի տարածաշրջանում, իսկ ըստ գործող ընկերությունների ու նրանցում աշխատողների թվի՝ Վանաձորում, որտեղ գործում է մոտ 50 ձեռնարկություն՝ մոտ 2500 աշխատատեղերով: Գործող 180 ձեռնարկություններից միայն 6-ն են խոշոր, մնացած ձեռնարկությունները իրենցից ներկայացնում են փոքր ու միջին ձեռնարկություններ, որտեղ ընդգրկված են արդյունաբերական աշխատողների մոտ 30%-ը: Մարզի փոքր ու միջին ձեռնարկությունների մոտ 40%-ը գյուղմթերքների վերամշակման ու սննդի արտադրության ձեռնարկություններ են: Զգալի թիվ են կազմում նաև քարամշակող արտադրամասերը, կան փայտամշակման և այլ տիպի ձեռնարկություններ, որոնց արտադրանքի բացարձակ մեծամասնությունը իրացվում է հանրապետությունում, քանի որ ժամանակակից տեխնալոգիաներ ու սարքավորումներ չունենալու պայմաններում՝ նրանց արտադրանքը մրցունակ չի արտաքին շուկայում: Մարզի արդյունաբերության հիմնական ճյուղի՝ մշակող արդյունաբերության կառուցվածքում առկա է գերակշռող ենթաճյուղ՝ մետալուրգիան: Չնայած 2008-2012թթ. մշակող արդյունաբերության տեսակարար կշիռներում էական փոփոխություններ չեն գրանցվել, այնուամենայնիվ նկատելիորեն աճել է մետալուրգիայի (ավելի քան 4%) տեսակարար կշիռը և զգալիորեն նվազել են քիմիական արդյունաբերության (մոտ 2%) ու թեթև արդյունաբերության (1.5%) տեսակարար կշիռները: Քիմիական և թեթև

արդյունաբերության ձեռնարկությունները թեև ունեն զարգացման մեծ ներուժ, չեն կարողանում ավելացնել արտադրության ծավալները: Եթե քիմիական արտադրության մասով դրա պատճառը ներդրումների անբավարար ծավալներն են ու էներգակիրների գների աճը, ապա թեթև արդյունաբերության մասով՝ սպառման շուկայի սահմանափակությունն է և մարկեթինգային ակտիվ քաղաքականության բացակայությունը:

Ելնելով մարզի արդյունաբերության ներկա իրավիճակից, հեռանկարներից և հնարավորություններից, ինչպես նաև հաշվի առնելով հանրապետության աշխարհագրական դիրքը, առաջիկա տարիներին մարզում արդյունաբերության զարգացման հիմնական ուղղությունները կհանդիսանան՝

- քիմիական արդյունաբերությունը,
- լեռնահանքային արդյունաբերությունը,
- մետալուրգիան,
- գյուղմթերքների վերամշակումը,
- թեթև արդյունաբերությունը,
- էներգակիրների արտադրությունը:

2013թ. հունվար-հունիս ամիսների ցուցանիշներով մարզի արդյունաբերության հիմնական տեսակների ծավալները, աճերը և դրանց տեսակարար կշիռները ունեն այսպիսի տեսք՝

- **մշակող արդյունաբերություն** 24,671.26 մլն դրամ, ծավալի աճի ինդեքսը՝ 98.5% և տեսակարար կշիռը՝ 79.2%
- **հանքարդյունահանումը** համապատասխանաբար՝ 4,415.24 մլն դրամ, 100.2% և 14.2%,
- **էլ. էներգիայի արտադրությունը**՝ 2,060.30 մլն դրամ, 138.1% և 6.6%:

2013թ. հունվար-հունիս ամիսներին մարզի մշակող արդյունաբերության մեջ ըստ ճյուղերի պատկերը հետևյալն է.

	Ճյուղի անվանումը	2013թ. հունվար-հունիս (հազ. դրամ)	2012թ. հունվար-հունիս (հազ. դրամ)	աճը (%)	2013թ. հունվ-հունիս տես. կշիռը մշակող արդյունաբերության մեջ (%)
1.	Քիմիական արդյունաբերություն	516,140.0	409,406.0	126.1	2.1
2.	Թեթև արդյունաբերություն	433,888.0	452,907.0	95.8	1.8
3.	Սննդի արդյունաբերություն	1,582,984.0	1,174,181.0	134.8	6.4
4.	Մեքենաշինություն և սարքաշինություն	504,323.0	1,263,498.0	39.9	2.0
5.	Փայտամշակում և կահույքի արտադրութ.	23,967.0	19,759.0	121.3	0.1
6.	Մետալուրգիա	21,292,522.0	21,425,028.0	99.4	86.3
7.	Այլ ճյուղեր	317,431.0	295,629.0	107.4	1.3
Ընդամենը		24,671,255.0	25,040,408.0	98.5	100.0

Ըստ տարածաշրջանների 2013 թվականի հունվար-հունիս ամիսներին թողարկված արտադրանքի ծավալն ընթացիկ (գործող) գներով ունի այսպիսի տեսք.

(հազ. դրամ)

Տարածաշրջանի անվանումը	2013թ. հունվար-հունիս	2012թ. հունվար-հունիս	Աճը		Տեսակարար կշիռը (%)
			Բացարձակ	(%)	
Սպիտակ	921,505.0	569,685.0	251,820.0	161.8	2.96
Տաշիր	391,801.0	305,797.0	86,004.0	128.1	1.26
Գուգարք	1,509,838.0	1,155,184.0	354,654.0	130.7	4.85
Ստեփանավան	2,155,860.0	2,325,954.0	-170,094.0	92.7	6.92
Թումանյան	24,042,585.0	23,957,814.0	84,771.0	100.4	77.19
Վանաձոր	2,125,207.0	2,623,506.0	-498,299.0	81.0	6.82
Ընդամենը	31,146,796.0	30,937,940.0	208,856.0	100.7	100.00

2013 թվականի 1-ին կիսամյակի արդյունքներով ևս արտադրության ծավալի նվազում են արձանագրվեց Ստեփանավանի՝ 7.3%-ով («Սագամար» ՓԲԸ-ի արտադրության ծավալների նվազում) և քաղաք Վանաձորի՝ 19.0%-ով (քաղաքի մեքենաշինության ու սարքաշինության 3 ընկերությունների արտադրության ծավալների անկում, քիմիական ձեռնարկությունների ծավալի աճի տեմպի նվազում) արդյունաբերական ձեռնարկությունները: Ընդ որում Վանաձորի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրության ծավալի նվազման տեմպը աճել է, որը մտահոգիչ հանգամանք է:

Վերջին ամիսներին Տաշիրի տարածաշրջանի ձեռնարկություններն արտադրության 56.8% աճ են գրանցել (մայիս ամսվա արդյունքներով 210.5%), որը հատկապես պայմանավորված է ինչպես հայաստանյան ներքին շուկայում պանրի պահանջարկի, այնպես էլ ԱՊՀ երկրներ արտահանման աճով:

Ի տարբերություն մշակող և հանքագործական արդյունաբերության ճյուղերի 2013թ. 1-ին կիսամյակում զգալի աճ է արձանագրվել էներգետիկայի ճյուղի ցուցանիշներում՝ 38.1%-ով աճել է ոչ միայն ճյուղի ձեռնարկությունների կողմից թողարկված արտադրանքի (էլեկտրաէներգիայի) ծավալը դրամային արտահայտությամբ, այլ նաև 24.7%-ով կամ 21.45 մլն կՎտ-ով աճել է էլեկտրաէներգիայի արտադրության ծավալը բնեղեն արտահայտությամբ: Անցած կիսամյակի արդյունքներով 16 էլեկտրակայան ավելացրել են էլեկտրաէներգիայի արտադրության ծավալները (մարզում գործում է 25 էլեկտրակայան, որից 24-ը ՀԷԿ-եր են):

Զարգացման հնարավորություններ

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մարզի տնտեսության (այդ թվում նաև արդյունաբերության) զարգացման հիմնական գրավականն այսօր մարզում դեռևս որոշ չափով

պահպանված գիտա-տեխնիկական ոլորտի մարդկային ներուժն է, ինչպես նաև ժամանակակից բարձր տեխնոլոգիաների կիրառումն ու տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի կայացումը, 2012թ. ՀՀ կառավարությունը իր ռազմավարական ծրագրերի իրականացման միջոցառումների շարքում ընդգրկել է Վանաձորում տեխնոլոգիական կենտրոնի (տեխնոպարկ) հիմնման հարցը: Սա է հիմք կհանդիսանա ոչ միայն Լոռու մարզի տնտեսական զարգացման և կենսամակարդակի բարձրացման համար, այլև հնարավորություն կընձեռնի Հայաստանի ընդհանուր տեղնոլոգիական առաջընթացի, արտադրանքի մրցունակության ու վարկանիշի բարձրացման համար: Հաշվի առնելով նախկին արդյունաբերական հզորությունների, տեխնոլոգիական զարգացման առկա ներուժի ավանդույթների և համապատասխան կրթական հաստատությունների առկայությունը, մեր կարծիքով Վանաձորի ՏԿ հաջող գործունեության համար վճռորոշ նշանակություն կարող են ունենալ հետևյալ առաջարկությունների իրականացումը.

Նախնական փուլ

ՏԿ-ի նախագծման աշխատանքներին զուգահեռ իրականացնել մասնագետների վերապատրաստում ու պատրաստում, աշխատանքների ուղղությունների ընտրություն (որոնք համեմատաբար հեշտ կգտնեն իրացման շուկաներ) և ստեղծել համապատասխան start-up – ների ձևավորման հնարավորություն:

ՏԿ-ի կառուցման և ձևավորման փուլ

Հաշվի առնելով Վանաձորում առկա գիտատեխնիկական ավանդույթները արտադրության ավտոմատիզացիայի բնագավառում՝ ՏԿ-ի գործունեության սկզբնական փուլի համար ընտրել հետևյալ ուղղությունները,

- ✓ անլար տեխնոլոգիաների ներդրմամբ ապարատա-ծրագրային մոդուլային համակարգերի ստեղծում՝ արդյունաբերության տարբեր ճյուղերում կիրառելու նպատակով
- ✓ Վանաձորում արտադրված երկրորդային չափիչ-հսկիչ սարքերին փոխարինող տեղեկատվության գրանցման արդյունաբերական սարքերի մոդուլների ստեղծում
- ✓ Ժամանակակից էլեկտրահաղորդակների և կատարողական մեխանիզմների ստեղծում:

Գյուղատնտեսություն

Չնայած վերջին տարիներին մարզի ՀՆԱ-ում գյուղատնտեսության ոլորտի տեսակարար կշռի նվազման՝ (պայմանավորված նաև օբյեկտիվ պատճառներով՝ բնակլիմայական խիստ անբարենպաստ պայմաններ) այն հանդիսանում է մարզի տնտեսության հիմնական ոլորտներից: Լոռու մարզի գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են՝ 251,154.6 հա, այդ թվում վարելահողերը՝ 42,075.0 հա (ոռոգելի 9,612.1 հա), բազմամյա տնկարկները՝ (418.0 հա, տնամերձով՝ 2,654.0 հա), խոտհարքները՝ 35,155.8 հա, արոտավայրերը՝ 145,714.1 հա և այլ հողատեսքեր՝ 27,791.7 հա:

Լոռու մարզի ագրոպարենային համակարգը ներառում է 42,345 գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսական, սննդի ու ագրոպարենային ոլորտի վերամշակող արդյունաբերության, առևտրի ու սպասարկումների 59 ձեռնարկություններ ու կազմակերպություններ, ինչպես նաև այլուրի, հացի, հրուշակեղենի և մակարոնեղենի, մսամթերքի, կաթնամթերքի, պահածոների, օղու, գարեջրի, հանքային ջրերի և ոչ ալկոհոլային խմիչքների արտադրության՝ 166 տնտեսավարող սուբյեկտներ և անհատ ձեռներեցներ, 2 սպանդանոց:

Մարզում յուրաքանչյուր տարի ցանվում է շուրջ 14,000 հա հացահատիկ, 5,000-6,000 հա կարտոֆիլ, 1,500 հա բանջարեղեն, 12,000 հա բազմամյա և միամյա կերային մշակաբույսեր, որոնց միջին բերքատվությունը հաճախ զիջում է հանրապետության միջին ցուցանիշներին: Պատճառները՝ ինտենսիվ տեխնոլոգիաների բացակայությունը, սերմերի ցածր որակը, գյուղատնտեսական տեխնիկայի ֆիզիկական և բարոյական մաշվածությունը: Գրեթե յուրաքանչյուր տարի մարզի ցանքատարածությունները խիստ տուժում են տարերային տարբեր աղետներից (կարկտահարություններ, հորդառատ անձրևներ, ջրհեղեղներ, փոթորիկներ), սակայն միշտ չէ, որ << կառավարությունը միջոցներ է ձեռնարկում տարերային տարբեր աղետներից տուժածներին օգնելու համար:

Տարբեր պատճառներով (տարեկան միջին հաշվով) շրջանառության մեջ չի դրվում շուրջ 8.4 հազ. հա վարելահող: Գյուղացիական տնտեսությունների մեծ մասը փոքր չափերի են, արտադրության վարման, մեքենայացված աշխատանքների ու արտադրվող ապրանքների իրացման կազմակերպման հետ կապված դժվարությունները, ապրանքանյութական արժեքների աճող գները հանգեցրել են նրան, որ դրանք հետզհետե վերածվել են մանր, բնամթերային տնտեսությունների: Մեկ գյուղացիական տնտեսությանը բաժին է ընկնում միջինը 0.6 հա վարելահող, 1,0 հա խոտհարք:

Խորհրդային տարիների ժամանակ մարզի ոռոգելի տարածքները կազմել են ավելի քան 15 հազ. հա: Այժմ ըստ մարզային հողային հաշվեկշռի մարզի ոռոգելի հողատարածքները կազմում են 9612.1 հա, որոնց ոռոգման աշխատանքները իրականացվում են 4 մեծ միջտնտեսային ջրանցքների՝ Նալբանդի մեծ ջրանցքի 36.0 կմ երկարությամբ, Լոռու մայր ջրանցքի՝ իր դոտացիոն ջրանցքներով 62.81 կմ ընդհանուր երկարությամբ, Կիրովի ջրանցքի՝ 9.3 կմ երկարությամբ և Այրում-Ճաճկան մայր ջրանցքի՝ 17.2 կմ երկարությամբ, ինչպես նաև 12 պ/կ-ների և ավելի քան 400 կմ երկարությամբ ներտնտեսային ոռոգման ցանցերի միջոցով, որոնք այսօր ամբողջությամբ գտնվում են խիստ քայքայված վիճակում:

1998-2012թթ. տարբեր ծրագրերի միջոցով մարզի ոռոգման համակարգերի բարելավման համար կատարվել է ավելի քան 3.2 մլն ԱՄՆ դոլարի և 1,120.0 մլն դրամի ներդրումներ: Վերակառուցվել է ավելի քան 163 կմ երկարությամբ միջտնտեսային, ներտնտեսային և ոռոգման ներքին ցանցեր, ինչպես նաև 168 ջրաչափական դիտակետեր:

Սակայն մարզի ոռոգման համակարգի տեխնիկական վիճակը բավարար համարելու համար այս ամենը շատ քիչ է, քանի որ այսօր մարզի ավելի քան 9600 հա ոռոգելի հողատարածքներից փաստացի ոռոգվում է մոտավորապես 2500-3000 հա:

Համակարգի վերականգնման համար անհրաժեշտ են մոտ **13.0 մլրդ** դրամ ներդրումներ, որի շնորհիվ մարզի ոռոգելի հողատարածքները կավելանան 3,5-4,5 հազ. հեկտարով:

Էներգետիկ ճգնաժամի տարիներին (1993-96թթ.) մարզում կար շուրջ 5,000 հա պտղատու այգիներ: 2012թ. մարզի այգիները կազմել են 2654 հա (ներառյալ տնամերձերը): Մարզի ցածրադիր գոտու համայնքներում հեռանկարային ճյուղ է կորիզավորների այգիների հիմնումն ու զարգացումը (դեղձ, ծիրան, սալոր, կեռաս): Կան բոլոր նախադրյալները այդ ճյուղի զարգացման համար:

Լոռու մարզը մասնագիտացված է կաթնամսային անասնաբուծությամբ: Խոշոր եղջերավորների և խոզերի գլխաքանակը վերջին տարիների միջին տվյալներով կազմել է Հանրապետության համապատասխանաբար 12.3%-ը և 8.13%-ը, իսկ մսի իրացումը և կաթի արտադրությունը՝ 11.7%-ը և 12.7%-ը: Մարզում նկատվում է ինչպես գյուղատնտեսական

կենդանիների գլխաքանակի, այնպես էլ անասնապահական մթերքների արտադրության աճ: 2013 թվականի հունվարի 1-ի դրությամբ մարզում հաշվառվել է 81540 գլուխ խոշոր եղջերավոր կենդանիներ, որից՝ կովեր 39127 գլուխ, խոզեր՝ 13701 գլուխ, ոչխարներ և այծեր՝ 32190 գլուխ:

2012 թվականին մարզում արտադրվել է 15.1 հազ. տոննա միս, 77.7 հազ. տոննա կաթ, 47.3 մլն հատ ձու, 65.7 տոննա բուրդ, 310 տոննա մեղր:

Մարզի տարածաշրջաններն իրենց բնակլիմայական պայմաններով, ինչպես նաև կաթի վերամշակման արտադրական հոգրությունների առկայությամբ (միջազգային չափանիշներին համապատասխան կաթնամթերքի արտադրություն) բարենպաստ են անասնապահության զարգացման համար: Ներկայումս մշակված է նաև մարզում ոչխարաբուծության զարգացման ծրագրային առաջարկ:

Ջարգացման հնարավորությունները

Գյուղատնտեսության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով խիստ կարևոր է վերամշակող ձեռնարկություններ ստեղծումը տեղերում: Առաջարկվում է.

- Մարզում ստեղծել «Ագրոսպասարկում» միավորումներ, նրանց հագեցնել անհրաժեշտ գյուղ.գործիքներով և գյուղ. տեխնիկայով, որոնք կարող են իրականացնել վճարովի ծառայություններ
- Մարզում ստեղծել պտղի, հատապտղի վերամշակման արտադրություններ, որտեղ կմթերվեն մարզում արտադրված էկոլոգիական մաքուր վայրի հատապտուղները և այգիներում աճեցված բարձրորակ պտուղները, խթանելով ճյուղի զարգացմանը:
- Ժամանակակից տեխնալոգիաներով հագեցած ոչխարաբուծական և տավարաբուծական տնտեսություններ
- Գյուղատնտեսական կենդանիների մորթի արտադրամասեր
- Մսի, կաթի.կաշվի և բրդի վերամշակման ձեռնարկություններ
- Ստեղծել համակցված կերերի արտադրամաս, որը գյուղատնտեսական կենդանիներին կապահովի սննդանյութերով հարուստ կոպիտ և հյութալի կերերով:

Ջրուաշրջություն:

Ոլորտի զարգացման համար անհրաժեշտ մի շարք գործոնների առկայությունը (աշխարհագրական դիրքը՝ մարզը հանդիսանում է Հայաստանի հյուսիսային դրապաս, պատմա-մշակութային հուշարձանների առատությունը՝ մարզում են գտնվում 1000-ից ավելի պատմա-մշակութային հուշարձաններ, ճանապարհային զարգացած ցանցը և բնակլիմայական նպաստավոր պայմաններ) լավ նախադրյալ են հանդիսանում ոլորտի զարգացման համար:

Լոռու մարզը Հայաստանի տնտեսական հզոր ներուժ ունեցող մարզերից է և աշխարհագրական դիրքը նպաստավոր է տնտեսության համար, քանի որ նրա տարածքի կենտրոնական մասով է անցնում Հայաստանի գլխավոր երկաթուղին և ավտոմայրուղին, որոնք դեպի Վրաստան և սևծովյան նավահանգիստներ մարզին ելք են տալիս, իսկ արևմտյան ուղղությամբ՝ Գյումրիի միջոցով դեպի Թուրքիա: Լոռու մարզը գրավիչ տարածք է նաև զանազան հետաքրքրության զբոսաշրջիկների համար: Մարզն իր լանդշաֆտով, բնակլիմայական պայմաններով, ավանդույթներով, մշակութային և բնական հուշարձաններով զբոսաշրջիկներին հրապուրելու մեծ ներուժ ունի: Շնորհիվ իր բարենպաստ բնակլիմայական պայմանների մարզի տարածքն

աչքի է ընկնում իր ռեկրեացիոն ռեսուրսներով (հանքային ջրեր, սաղարթախիտ անտառներ, պատմա-ճարտարապետական հուշարձաններ և այլն), սակայն միջազգային շուկայում տուրիստական գործունեությամբ ներկայանալի են մեծամասամբ մայրաքաղաք Երևանի սպասարկման ոլորտի ձեռնարկությունները, որոնց կողմից ձևավորվող տուրփաթեթներում Լոռին հիմնականում մեկօրյա երթուղով է ներկայացված: Մարզում զբոսաշրջության ակտիվացման համար տուրօպերատորներին պետք է առաջարկել Լոռում մի քանի օր տևողությամբ տարաբնույթ զբոսաշրջային երթուղիներ, այդ թվում նաև տարածաշրջանային, ինչը հնարավորություն կընձեռնի մարզի ճանապարհների երկայնքով ստեղծել սպասարկման բազմաթիվ կառուցվածքներ:

Լոռու մարզի զբոսաշրջային ոլորտի հիմնախնդիրները,

- Մարզի հյուրանոցային տնտեսությունում գործում են զբոսաշրջիկների պահանջները բավարարող ավելի քան 30 հյուրանոց և հյուրընկալող հանգրվան, սակայն մարզի հյուրանոցային տնտեսության օբյեկտներից և ոչ մեկը ձեռք չի բերել ՀՀ որակավորման աստիճան (թեև դա կամավոր հիմունքներով է):
- Մարզի տարածքում բացակայում է քեմփինգային հյուրանոցներն ու բազաները:
- Լոռվա մարզում դեռևս սակավ են զբոսաշրջային տները՝ (B&B)-ները, մեծ պահանջարկ կունենան, թեև այսօր մարզում այդ ուղղությամբ որոշակի աշխատանքներ արդեն տարվում են, սակայն պետք է ընդլայնել գործընթացը:
- Մարզի կարևոր ենթակառուցվածքների՝ միջպետական նշանակության ավտոմայրուղիների, դեպի զբոսաշրջային գրավչության օբյեկտներ տանող ավտոճանապարհների, զբոսաշրջային երթուղիների, էկոտուրերի կաճանների երկայնքով սանիտարական պայմաններ ապահովող շինությունները բացակայում են և առանցքային խոչընդոտ են համարվում:
- Ճանապարհների երկայնքով շատ սակավ են տեղադրված կոմունիկացիոն ցուցանակները, ինչը դժվարեցնում է հասանելիությունը դեպի այցելավայրեր:
- Լոռու մարզը լուսաբանող գովազդատեղեկատվական ապահովման համակարգը շատ թերի է: Անհրաժեշտ է ստեղծել միջազգային հանրության համար Լոռու մարզի մասին տուրիստական կայք, որտեղ արտացոլված կլինի մարզի ողջ տուրիստական ներուժը:
- Մարզում կան իրենց թեմատիկայով բավականին արդիական թանգարաններ (ք.Սպիտակի Երկրաշարժի թանգարանը, ք.Վանաձորի Նանսենի թանգարանը և այլն), որոնք ընդհանրապես ներառված չեն տուրփաթեթների մեջ:
- Լոռու մարզում առկա ենթակառուցվածքներում մարդկային ռեսուրսները պատրաստ չեն բավարարելու ժամանակակից սպասարկման պահանջները: Իսկ այս տարածաշրջանում տուրիզմի զարգացումը ինքնին կպահանջի
 - ✓ ավելի բարձր որակավորված աշխատուժ,
 - ✓ ավելի մեծ ներդրումներ,
 - ✓ ավելի բարձրակարգ ծառայություններ:

Լոռու մարզում զբոսաշրջության ոլորտում հնարավոր ներդրումների արդյունքում վերը նշված հիմնախնդիրների լուծմանը համընթաց զբոսաշրջության ոլորտը ինքը կդառնա գործարար միջավայրի աշխուժացման հիանալի միջոց և կնպաստի.

- նոր աշխատատեղերի ստեղծմանը,

- զբոսաշրջության ոլորտի գործարար միջավայրի ակտիվացմանը,
- ներդրումային դաշտի ձևավորմանը,
- բնակչության կենսամակարդակի աճի ապահովմանը,
- մարզի մշակութային գործունեության ակտիվացմանը,
- մարզի տնտեսության այլ ճյուղերի զարգացմանը՝ կապված զբոսաշրջային ծառայությունների ստեղծման և մատուցման հետ:

Հաշվի առնելով Լոռու մարզի բնակլիմայական պայմանները և բնական ռեսուրսները՝ զբոսաշրջության ոլորտի ցանկալի զարգացումն ապահովելու համար մարզում հեռանկարային կարող են համարվել զբոսաշրջության հետևյալ ուղղությունները.

- էկոտուրիզմ,
- սպորտա-առողջարանային,
- ճանաչողական,
- գյուղական,
- արկածային,
- հնագիտական,
- կրոնական,
- մանկական:

Լոռու մարզի սոցիալ տնտեսական զարգացման գերակա խնդիրները 2014-2017թթ. համար հանդիսանում են.

1. Մարզում (հատկապես քաղաքային համայնքներում) նոր աշխատատեղերի ստեղծում, չգործող արդյունաբերական ձեռնարկությունների վերագործարկմանն աջակցություն՝ օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաների, որպես առանձին նոր ոլորտ, հնարավորություններն ու զբոսաշրջության զարգացման համար բարենպաստ պայմանները:
2. Փոքր և միջին ձեռներեցության զարգացման՝ փոքր արտադրական ու սպասարկման ոլորտի ձեռնարկությունների բացման միջոցով քաղաքային համայնքներում զբաղվածության խնդրի լուծում և խոշոր արտադրական ձեռնարկություններից քաղաքների կենսագործունեության բարձր կախվածության թուլացում:
3. Գյուղմթերքների իրացման խոչընդոտների վերացում, գյուղմթերքների վերամշակման հնարավորությունների ստեղծում:
4. Գյուղատնտեսական նշանակության հողերի պիտանելիության, արդյունավետության բարձրացմանն ուղղված աշխատանքների իրականացում, ոռոգման համակարգերի վերակառուցում:
5. Մարզի Սպիտակի, Գուգարքի և Ստեփանավանի տարածաշրջաններում անօթևան մնացած ընտանիքների համար բնակարանաշինության ծրագրերի իրականացում:
6. Մարզի գյուղական համայնքներում (հատկապես փոքր գյուղերում) ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված համալիր ծրագրերի իրականացում:

4. Մարզի տնտեսության զարգացման գերակա ուղղություններին համապատասխան մշակված ծրագրեր և ձեռնարկված քայլեր

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

• Լոռու մարզում փոքր հիդրոէներգետիկայի զարգացման մարզային ծրագիր

- ✓ Ի շնորհիվ ՀՀ կառավարության հավանությանն արժանացած փոքր հիդրոէներգետիկայի զարգացման մարզային ծրագրի իրականացման ներկայումս մարզում գործում են 24 ՓՀԷԿ, որոնցից 14-ը շահագործման են հանձնվել 2008-ից 2012թվականների ընթացքում, 1-ը՝ 2013թ.: Մինչև 2018 թվականը էներգետիկայի ոլորտում նախատեսվում է կառուցել (լրացուցիչ կառուցապատել) և շահագործման հանձնել ևս 13 ՓՀԷԿ: Ներդրումների ընդհանուր ծավալը կկազմի 7,233.8 մլն դրամ, որի արդյունքում մարզում էլեկտրաէներգիայի տարեկան արտադրության ծավալը կաճի 56.47 մլն կՎտժ-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ ավելի քան 900.0 մլն դրամով, կբացվեն մոտ 150 նոր աշխատատեղ:
- ✓ Մշակված ծրագրերին համապատասխան նախատեսվում է նաև սկսել 2 խոշոր ՀԷԿ-երի («Շնող ՀԷԿ» և «Լոռի Բերդ ՀԷԿ»,) շինարարությունը (պահանջվում է մոտ 30.0 մլրդ դրամ ներդրումներ):

• Թեթև արդյունաբերության ձեռնարկությունների ստեղծում և ընդլայնում, ինչը էական դեր կարող է ունենալ կանանց շրջանում գործազրկության նվազեցման համար):

• Գյուղ մթերքների վերամշակման ձեռնարկությունների ստեղծում, մասնավորապես՝

- ✓ Կարտոֆիլի և բանջարեղենի մթերման, տեսակավորման, նախնական մշակման ու փաթեթավորման և վաճառքի կազմակերպման ձեռնարկությունների ստեղծում:
- ✓ Պտղի և հատապտուղների մթերման, վերամշակման, պահածոյացման, ինչպես նաև սառնարանային տնտեսությունների ձեռնարկությունների ստեղծում:
- ✓ Ստեղծել մսի, կաթի. կաշվի ու բրդի վերամշակման, համակցված կերերի արտադրության և գյուղատնտեսական կենդանիների մորթի ձեռնարկություններ:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

• Ժամանակակից տեխնալոգիաներով հագեցած անասնաբուծական տնտեսությունների ստեղծման և ընդլայնման ծրագրեր

- ✓ Մշակվել է մարզի ոչխարաբուծության զարգացման ծրագիր (միջև 120000 գլուխ ոչխար) և ներկայումս Լուսաղբյուր համայնքում Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոնի համաֆինանսավորմամբ իրականացվում է ոչխարաբուծական ֆերմայի ստեղծման փորձնական ծրագիր:

ԶՐՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

• Միջհամայնքային զբոսաշրջանային գրասենյակի ստեղծում

- ✓ Ալավերդի քաղաքում Ֆրանսիայի ՊԱԿԱ ռեգիոնի համաֆինանսավորմամբ իրականացվում է զբոսաշրջանային գրասենյակի հիմնման ծրագիր:

• «Հյուսիսային դարպասներ» զբոսաշրջության ծրագիր

- ✓ Մարզի հյուսիսում և հյուսիս-արևելքում զբոսաշրջության ոլորտի զարգացման նպատակով մշակվել և ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել է ծրագիր, որի շահառուները հանդիսանում են Թբիլիսի-Երևան մայրուղու երկայնքով (81կմ) և ճարտարապետական նշանակություն ունեցող պատմական հուշարձաններին մոտ գտնվող մարզի համայնքները:

• Լոռու մարզի զբոսաշրջության և ենթակառուցվածքների զարգացման ծրագրեր

- ✓ Լոռու մարզի նախատեսվում է ստեղծել մարզի զբոսաշրջային B&B տների (ԲԻ ընդ ԲԻ՝ անկողին և նախաճաշ) ասոցիացիա, որը կնպաստի տուրիստական ենթակառուցվածքների և ֆերմերային տնտեսությունների համագործակցության կայացմանն ու ներդաշնակ զարգացմանը: Ֆերմերային տնտեսությունները հնարավորություն կունենան իրենց արտադրած թարմ, էկոլոգիապես մաքուր սննդամթերքը պայմանագրային հիմունքներով մատակարարել ասոցիացիայի անդամ զբոսաշրջային B&B տներին: